Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Հայաստանի Հանրապետության Հանրային Հեռուստառադիոընկերության» խորհրդին

## *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

# Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Հայաստանի Հանրապետության Հանրային Հեռուստառադիոընկերության» խորհրդին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

## *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է

Grant Thornton

նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

16 ապրիլի 2018թ.

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկա-յացված) | 2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկա-յացված) |
|---|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 9,843,740 | 10,823,450 | 8,757,784 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 1,125,041 | 1,418,885 | 1,705,866 |
| Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր | 6 | 543,348 | 408,853 | 216,024 |
| | | 11,512,129 | 12,651,188 | 10,679,674 |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | | |
| Պաշարներ | 7 | 47,627 | 16,321 | 18,645 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 6 | 258,863 | 258,398 | 170,793 |
| Դեբիտորական պարտք ընթացիկ շահութահարկի գծով | | - | - | 8,667 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 9 | 70,879 | - | 30,670 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 8 | 2,271 | 1,617 | 11,626 |
| | | 379,640 | 276,336 | 240,401 |
| Ընդամենը ակտիվներ | | 11,891,769 | 12,927,524 | 10,920,075 |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

| Հազար դրամ | Ծանոթ. | 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված) | 2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված) |
|---|---|---|---|---|
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | | |
| *Կապիտալ և պահուստներ* | 10 | | | |
| Բաժնետիրական կապիտալ | | 1,213,058 | 1,160,017 | 935,017 |
| Էմիսիոն եկամուտ | | 755 | 755 | 755 |
| Վերագնահատման պահուստ | | 2,021,635 | 2,117,405 | 2,576,446 |
| Այլ պահուստ | | 72,949 | 67,647 | 30,010 |
| Չբաշխված շահույթ/(վնաս) | | 126,901 | 83,821 | (1,412) |
| | | 3,435,298 | 3,429,645 | 3,540,816 |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | | |
| Հետաձգված եկամուտ | 11 | 5,831,647 | 6,500,165 | 4,387,501 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 12 | 522,476 | 552,166 | 653,173 |
| Հետաձգված ԱԱՀ ներմուծումների գծով | | 52,136 | - | - |
| Բանկային վարկեր | 13 | 451,827 | 766,518 | 481,596 |
| | | 6,858,086 | 7,818,849 | 5,522,270 |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | | |
| Բանկային վարկեր | 13 | 1,080,650 | 995,720 | 1,202,811 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 14 | 500,383 | 664,026 | 654,178 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | 17,352 | 19,284 | - |
| | | 1,598,385 | 1,679,030 | 1,856,989 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 11,891,769 | 12,927,524 | 10,920,075 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 16 ապրիլի 2018թ.

Մարգարիտա Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Օֆելյա Գյոդակյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 55-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված) |
|---|---|---|---|
| Գովազդային և այլ հասույթ | 15 | 250,221 | 568,303 |
| Դրամաշնորհներից եկամուտ | 16 | 5,907,534 | 5,601,396 |
| Այլ դրամաշնորհներից եկամուտ | | 5,355 | 3,727 |
| Այլ եկամուտներ | | 18,275 | 26,689 |
| Ֆիլմերի և հաղորդումների գծով ծախսեր | 17 | (2,273,610) | (2,511,686) |
| Հեռարձակման ծախսեր | 18 | (280,519) | (427,960) |
| Փոխհատուցումներ աշխատակիցներին | | (1,659,058) | (1,596,699) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | (1,412,351) | (976,042) |
| Այլ ծախսեր | 19 | (351,232) | (452,444) |
| Ֆինանսական եկամուտ | 20 | 5 | 8 |
| Ֆինանսական ծախս | 20 | (151,627) | (167,017) |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 21 | (34,931) | (1,809) |
| Շահույթ մինչև հարկերը | | 18,062 | 66,466 |
| Շահութահարկի գծով ծախս | 22 | (10,214) | (21,161) |
| Տարվա շահույթ | | 7,848 | 45,305 |
| *Այլ համապարփակ ֆինանսական արդյունք* | | | |
| *Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին* | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատումից աճ/(նվազում) | | 15,219 | (436,436) |
| Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ | | (3,044) | 87,287 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | | 12,175 | (349,149) |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | | 20,023 | (303,844) |

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 55-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Բաժնե-տիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Վերագնա-հատման պահուստ | Այլ պահուստ-ներ | Չբաշխված շահույթ/ (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ (մինչև վերաներկայացումը) | 935,017 | 755 | 2,576,446 | 30,010 | 121,446 | 3,663,674 |
| Վերաներկայացում (տես՝ ծանոթ. 30) | - | - | - | - | (122,858) | (122,858) |
| 2016թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացումից հետո) | 935,017 | 755 | 2,576,446 | 30,010 | (1,412) | 3,540,816 |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 45,305 | 45,305 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | (349,149) | - | - | (349,149) |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | (349,149) | - | 45,305 | (303,844) |
| Փոխանցում չբաշխված շահույթ | - | - | (109,892) | - | 109,892 | - |
| Պահուստային հիմնադրամի աճ | - | - | - | 37,687 | (37,687) | - |
| Այլ պահուստի մարում | - | - | - | (50) | - | (50) |
| Բաժնետոմսերի թողարկում | 225,000 | - | - | - | - | 225,000 |
| Շահաբաժիններ | - | - | - | - | (32,277) | (32,277) |
| Գործարքներ սեփականատերերի հետ | 225,000 | - | - | - | (32,277) | 192,723 |
| 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,160,017 | 755 | 2,117,405 | 67,647 | 83,821 | 3,429,645 |
| Տարվա շահույթ | | | | | 7,848 | 7,848 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 12,175 | - | - | 12,175 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | 12,175 | - | 7,848 | 20,023 |
| Փոխանցում չբաշխված շահույթին | - | - | (107,945) | - | 107,945 | - |

| Հազար դրամ | Բաժնե-տիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Վերագնա-հատման պահուստ | Այլ պահուստ-ներ | Չբաշխված շահույթ/ (վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Պահուստային հիմնադրամի աճ | - | - | - | 5,302 | (5,302) | - |
| Թողարկված բաժնետի-րական կապիտալ | 53,041 | - | - | - | - | 53,041 |
| Շահաբաժիններ | - | - | - | - | (67,411) | (67,411) |
| Գործարքներ սեփականատերերի հետ | 53,041 | - | - | - | (67,411) | (14,370) |
| 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,213,058 | 755 | 2,021,635 | 72,949 | 126,901 | 3,435,298 |

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 55-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված) |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Տարվա շահույթ | 7,848 | 45,305 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 2,258,386 | 1,981,214 |
| Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս | - | (7,110) |
| Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում) | 10,214 | 21,161 |
| Ֆինանսական ծախս | 151,627 | 167,017 |
| Ֆինանսական եկամուտ | (5) | (8) |
| Շնորհից եկամուտ | (5,912,889) | (5,605,123) |
| Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս | 34,931 | 1,809 |
| *Գործառնական շահույթ/(վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները* | (3,449,888) | (3,395,735) |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | (134,856) | (280,161) |
| Պաշարների փոփոխություն | (31,306) | 2,324 |
| Այլ ընթացիկ ակտիվների փոփոխություն | (70,879) | 30,670 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | (126,094) | 8,851 |
| *Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ* | (3,813,023) | (3,634,051) |
| Ստացված շնորհներ | 5,244,371 | 5,200,867 |
| Վճարված տոկոսներ | (145,000) | (172,872) |
| Վճարված շահութահարկ | (44,880) | (6,930) |
| *Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ* | 1,241,468 | 1,387,014 |

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

| Հազար դրամ | 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկա-յացված) |
|---|---|---|
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (394,259) | (713,842) |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (575,354) | (742,891) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | - | 9,428 |
| Ստացված տոկոսային եկամուտ | 5 | 8 |
| *Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ* | (969,608) | (1,447,297) |
| | | |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | | |
| Հիմնադրամի մարում | - | (50) |
| Վարկերից և փոխառություններից մուտքեր/(մարում),զուտ | (256,857) | 82,269 |
| Վճարված շահաբաժիններ | (14,370) | (32,277) |
| *Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ* | (271,227) | 49,942 |
| | | |
| Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում) | 633 | (10,341) |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 21 | 332 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում | 1,617 | 11,626 |
| Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում | 2,271 | 1,617 |

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 13-ից մինչև 55-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: